



Երևան, 11 Նոյեմբեր, 2019

Տերութափ Աղօթք

(միասնաբար արտասանուած)

Իմասկութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմասկութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա զիս. Եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

Աշխոս 46

ԱՄԵՆԱԿԱԼ ԱՍՏՈՒԱԾԸ ՄԵԶԻ ՀԵՏ Է

Ասպուած է մեր ապաւէնն ու զօրութիւնը,
նեղութեանց մէջ շուկով հասնող օգնականը:
Հեփեւաբար մենք չենք վախնար, նոյնիսկ եթէ աշխարհը սարսի,
եւ լեռները իյնան ծովերուն խորը:
Նոյնիսկ եթէ ալիքները շառաչեն ու փրփրին,
եւ լեռները դողան անոնց կարաղութենէն:
Ամենակալ Տէրը մեզի հետ է. մեր հայրերուն Ասպուածը մեր ապասփանն է:
Եկէք, դեսէք Տիրոջ գործերը,
զարմանահրաշ գործերը՝ որ ան կ'ընէ երկրի վրայ:
Աշխարհի չորս անկիւններուն՝ պարերազմները կը դադրեցնէ,
աղեղները կը կոփրէ, նիզակները կը փշրէ,
եւ վահանները կրակով կ'այրէ:
«Դադրեցուցէք ձեր կոհիւները, եւ ճանչցէք թէ ես եմ Ասպուածը,
ես է որ կ'իշխեմ ազգերուն, ես կը դիրեմ աշխարհին»:
Ամենակալ Տէրը մեզի հետ է.
մեր հայրերուն Ասպուածը մեր ապասփանն է:

ՃԱՐԱԿԱՆ-ԱՂՕԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Վ Ա Խ Ա Ա Ս Ո Ր Ք Ե Ր Ր Ո Ր Ո Վ Ժ Ի Ւ Ն, Մ Ո Վ Ա Զ Խ Ա Ր Հ Ի Ս Խ Ա Պ Ա Ղ Ո Վ Ժ Ի Ւ Ն:

Եւ Հ Ի Ա Ն Ա Պ Ա Գ Բ Ժ Հ Կ Ո Վ Ժ Ի Ւ Ն, Ն Ա Ձ Ե Ս Ե Լ Ո Ջ Ա Ր Ք Ա յ Ո Վ Ժ Ի Ւ Ն:

Ա Ր Ի Վ Ա Ս Ո Վ Ա Ճ Հ Ա Ր Ջ Մ Ե Լ Ո Ջ, Ո Ր Ա Պ Ա Մ Է Ն Ե Ն Ե Ղ Ե Լ Ո Ջ:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեղ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
ազ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի զնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՝ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՅՆ ՆԻՒԹԸ

ՀՀ

ՄԱՐԳԱՐԵՒԹԻՒՆ ԵՐԵՄԻՎՅԻ

16 ԳԼՈՒԽ

ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՄՔԸ ԵՐԵՄԻՎՅԻ ԿԵԱՆՁԻՆ ՀԱՄԱՐ (16:1-13)

Ասպուծոյ մեկ այլ ուրիշ պատգամը ուղղուած մարզարէին. «Քեզի կին մի առներ: Զաւակներ չունենաս» (1 հմբ): Զարմանալի պատգամ մը կ'ուղղուի, սակայն, կը յիշեցնէ Քրիստոսի այն խօսքը. «Այդ օրերուն վայ է եկեր յիմերուն եւ սպասու կիմերուն» (Մկրթ 24:19 հմմփ Ղուկ 21:23): Կամ Պողոս Առաքեալի այն խօսքին. «Նկարի ունենալով վերահաս նեղութիւնը, աւելի լաւ է որ մարդ ինչպէս որ է՝ այնպէս մնայ» (Ա Կորնթ 7:26): Որովհեքու Ասպուծոյ ահաւոր բարկութիւնն է որ պիտի յայգնուի, ուստի մարզարէն իր իսկ կեանքի օրինակով ցոյց փալու այդ բոլորը եւ հրաժարելի այն բոլոր առօրեայ կեանքի պարզկանութիւններէն ու պարզաւորութիւններէն, ու միայն մրածելու հոգիի փրկութեան մասին: Որովհեքու որքան ալ Ասպուածահիմն կանոններ են ու կեանքի բնական ընթացք եւ երեւոյթ, բայց նաև անոնք կրնան յաճախ արգելու ըլլալ մրածելու մեր հոգիներու փրկութեան մասին:

Մարդ արարածը բարօր կեանք կ'ապրի, որովհեքու այդ բոլորի մէջ կայ Ասպուծոյ խաղաղութիւնը, ողորմութիւնն ու գթութիւնը: Անգամ մը որ այդ բոլորը վերնան մարդը կը մարդուի ամէն դժուակի դժբախսութեան ու դժուարութեան (5 հմբ): Առաւել եւս, այս կացութեանց մէջ ոչ պիտի կարենան թաղուիլ, ոչ սուզ բռնել, մարմիններու վրայ կդրածներ չընեն, մազերը չիեւպիտեն, սուզի հաց պիտի ցածնեն, միխթարութեան բաժակ պիտի չխմեն (6-7 հմբ):

Ոչ միայն սուզի, այլ նաև Տերը կը պարուիրէ մարզարէին որ առաւել եւս կոչունքի վրուն չերթայ: Սուզի վրուն երթալու որպէսզի միխթարէր, բայց պիտի չերթայ, իսկ կոչունքի վրուն, որովհեքու կը նշանակէ անոնք կարծէք անբարբեր մարդիկ են, փոխանակ անդրադառնալու ու սպալու իրենց մեղքը, ընդհակառակը, անոնք փակախն կը շարունակեն կերուխումը (8-9 հմբ):

Իսկ եթէ հարցնեն ինչո՞ւ այս բոլորը, ի՞նչ պարբառով: Որովհեքու ձեր հայրերը Տերը թողուցին, ուրիշ ասպուածներու եպեւէ զացին, իսկ դուք ձեր հայրերէն աւելի չարութիւն ըրիք, անոր համար ալ օպար երկիր պիտի երթաք, օպար ասպուածներու ծառայութիւն պիտի ընէք, եւ Ասպուած պիտի չողորմի (10-13 հմբ):

ԱԶՍՈՐԷՆ ՎԵՐԱՎԱՐ (16:14-15)

Հակառակ այս դաժան ու խիստ վիճակին, Ասպուած իր ողորմութիւն ցոյց կու փայ, եւ կը խոսպանայ, որ այս անգամ ոչ թէ Եգիպտոսէն պիտի հանէ զանոնք, այլ՝ հիւսիսի երկրէն: Հետաքրքրական է, որ մարզարէական այս պատգամները հեպեւեալ ձեւով կը ներկայացուին, ամէն մէկ հարուածի կամ դառն պափիմի դիմաց, Ասպուծոյ ազարագրումի խոսպումը: Որովհեքու Ասպուած հաւափարիմ ու ճշմարիպ է իր վրուած խոսպումին, որ խոսպացաւ Արրահամին, Իսահակին եւ Յակոբին եւ զայիք սերունդներուն, որպէսզի իրենց վրայ այն խոսպացուած երկիրը, որ յաւիտենական կեանքն է, բոլոր անոնց որոնք Իրեն կը դառնան զղումով եւ ապաշխարութեամբ: Այս խոսպումը նաև յոյս մըն է անոնց որոնք աքսոր պիտի երթան, որպէսզի այդ յոյսով շարունակեն ապահնել Ասպուծոյ եւ պահեն իրենց հնազանդութիւնն ու հաւափարմութիւնը:

ԳԱԼԻՉ ԴԱՏՈՒՀԱՍԸ (16:16-18)

Ահա թշնամին կը ներկայանայ ձկնորսի եւ որսորդի կերպարով (16 հմբ): Ասպուծոյ ազքէն բան մը չի վրիպիր, որովհեքու Ասպուած ամենազէփ ու ամենափես է (17 հմբ): Յաճախ այնպէս կը կարծենք, որ ո՞վ կը փեսնէ մեր ըրածը, կամ թէ ո՞վ կ'իմանայ թէ ինչ ըրինք: Բայց իրաքանչիրիս խորհուրդները, խօսքերն ու գործերը յայգնի են Ասպուծոյ առջեւ: Կրկնակի պիտի ըլլայ հափուցումը (հմմփ Ելից 22:4, 7), որովհեքու անոնք երկիրը պղծեցին ամէն փեսակի պղծութիւններով (18 հմբ):

ԵՐԵՄԻՎՅԻ ՎԱՏԱՀՈՒԹԵԱՆ ԱՂՈԹԸ (16:19-21)

Ահա մարզարէն կը խոսպովանի եւ կը յայգարարէ, թէ Տերը Ինքն է իր օրութիւնը, բերդը, ապասպանարանը նեղութեան ժամանակ: Հիացմունքով կը յայգարարէ թէ ինչպէս Իսրայէլը որ հեռացաւ Ասպուծմէ, ահա երկրի ծառանգեցին: Հիմա հասած է պահը վերադառնալու ճշմարիպ Ասպուծոյ: Որովհեքու մարդ չի կրնար իրեն համար ասպուածներ շինել: Պիտի զայ պահը երբ Ասպուած ցոյց պիտի փայ իր օրութիւնը եւ անով ճանցնելու թէ իր անոնք Եհովա է, որ կը նշանակէ Ան որ է, եր եւ որ պիտի զայ, Յաւիտենականը: